ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ – 2021

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

29.09.2021թ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կարևոր առաջնահերթություններից մեկը եղել և մնում է ուսանողակենտրոն գործունեությունը: Այս կարևորագույն նպատակի իրագործման ճանապարհին մասնաճյուղում ցանկացած գործընթաց նպատակառուղղված է եղել ուսանողների կրթական կարիքների վերհանմանը, որակյալ կրթության ապահովման ճանապարհին նրանց ուսումնական ցանկությունների և պահանջների բացահայտմանն ու հնարավորինս բավարարմանը և բարելավմանը, և որպես դրա գրավական նրանց մոտիվացիայի բարձրացմանը և այլն:

Այդ նպատակով, մշտապես, մասնաճյուղում տարբեր մեխանիզմներով, մասնավորապես տարբեր հարցումների և հանդիպում-քննարկումների միջոցով ուսումնասիրվում և հավաքագրվում են ուսանողների խնդիրները և կարիքները, ապա շահագրգիռ կառույցներում դրանք քննարկվում են և առաջադրվում են ուսանողներին հուզող գործընթացների բարելավման գործողություններ:

Այդ գործընթացի շրջանակներում 2021 թվականի հունիսին մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության» ամենամյա ուսանողական առցանց հարցումը:

Հարցմանը ներգրավված են եղել բոլոր մասագիտությունների 1-ից 3-րդ կուրսերի ուսանողները (քանի որ բաժնի կողմից նույն ժամանակահատվածում առանձին հետազոտություն է իրականացվում նաև մասնաճյուղի շրջանավարտների շրջանում, այդ պատճառով այս հարցմանը 4-րդ կուրսերի ուսանողները չեն ներգրավվել):

Մասնկցության ապահովման տեսանկյունից պետք է նշել, որ հարցումն առցանց էր, հարցմանը մասնակցելու հղումն ստացել են մասնաճյուղի առկա ուսուցման 1-ից 3-րդ կուրսի 394 ուսանողներ, սակայն հարցմանը մասնակցել են 206-ը, այսինքն ընդամենը **52%-ը**, որը միգուցե առցանց հարցումների դեպքում մասնակցության վատ ցուցանիշ չէ, սակայն ցանկալի կլիներ, որ մեր ուսանողներն առավել ակտիվություն ցուցաբերեին և նպաստեին իրենց խնդիրների բացահայտմանը և լուծմանը: Ուղղակի նշենք, որ հաշվի առնելով առցանց հարցման դժվար կառավարումը, **30%** մասնակցությամբ հավաքագրված արդյունքները սոցոլոգիական հետազոտություններում համարվում են արժանահավատ:

	ԻԿՄ	Ֆինանս.	Զբոս.	Պատմ.	ՀԼԳ	Հոգեբ.	ՏՄՄ	ԱԼԳ	ՖԼԳ	ՌԼԳ	Դիզ.	ԴԿԱ	ԸՆԴ. (206)
Ուս.	20/ 60	26/ 56	4/ 34	24/ 30	13/ 26	10/ 20	31/ 49	42/ 53	10/ 10	3/ 9	15/ 30	8/ 17	206/ 394
%	33%	46%	12%	80%	50%	50%	63%	79%	100%	33%	50%	47%	52%

Ներկայացված թվերը ցույց են տալիս, որ որոշ կրթական ծրագրերի ուսանողներ ցուցաբերել են բավականին ակտիվ մասնակցություն (այստեղ կարելի է նշել տվյալ կուրսերի

ավագների բավականին արդյունավետ և պատասխանատու աջակցությունը), իսկ մի քանի կրթական ծրագրերի ուսանողներ վատ են մասնակցել հարցմանը և մենք կարող ենք նշել, որ այստեղ իրենց ոչ ակտիվ դերն ունեն ինչպես կուրսերի ավագները, այնպես էլ հենց իրենք՝ ուսանողներն իրենց անտարբերությամբ: Աղյուսակից կարող ենք փաստել, որ ակտիվության ամենացածր ցուցանիշ՝ 12%, առկա է «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողների շրջանում՝ 34 ուսանողից հարցմանը մասնակցել են միայն 4 ուսանող:

Հարցման օբյեկտիվությունը և ուսանողների անկաշկանդ մասնակցությունն ապահովելու համար հարցումն իրականացվել է անանուն և, ինչպես նշեցինք, առցանց: Միայն խնդիրների տարբերակման համար ուսանողներից պահանջվել է նշել կրթական ծրագրի անունը:

Հարցման նպատակն էր պարզել, թե մասնաճյուղի ուսանողները որքանո՞վ են իրազեկված և ներգրավված ուսումնակազմակերպչական գործընթացներում, որքանո՞վ են բավարարված առկա ռեսուրսներից և ծառայություններից, որքանո՞վ է մասնաճյուղը հասանելի տեղեկատվական հարթակներում և կիրառելի ուսանողների կողմից: Հարցումը նպատակ ուներ հավաքագրված արդյունքների և ուսանողների գրած կարծիքների և առաջարկների միջոցով վերհանել նրանց խնդիրները, ապա առաջարկել դրանց լուծման և այդ գործընթացների բարելավման գործողություններ:

1. Իրազեկվածությունը և ներգրավվածությունը ուսումնակազմակերպչական աշխատանքներից

Ենթադրում ենք, որ ուսանողի մոտիվացվածությունը կլինի բարձր, իսկ ուսումնառության նկատմամբ նրա վերաբերմունքը նպատակային և արդյունավետ, եթե նա իր մասնագիտությունն ընտրել է գիտակցաբար, հասկանալով, թե ի՞նչ մասնագիտություն է ցանկանում ձեռք բերել, ի՞նչ մասնագետ է ուզում դառնալ: Հակված ենք մտածելու, որ մասնաճյուղի կրթական ծրագրերը կարողանում են ճիշտ դերակատարություն ունենալ ուսանողների մոտ իրենց ապագա մասնագիտության վերաբերյալ ճիշտ տեսլական և հստակ կողմնորոշում ձևավորելու գործում:

Այն հարցին, թ՞ե պատկերացնում են, թե <u>ի՞նչ մասնագետ են դառնալու ավարտելուց հետո,</u> հարցմանը մասնկցած 209 ուսանողների **66%-ը** պատասխանել է **«այո»,** որը կարելի է համարել լավ ցուցանիշ, իսկ միայն **5%-ը** պատասխանել է **«ոչ»**:



Խնդրահարույց է այն իրավիճակը, որ հարցմանը մասնակցած ուսանողների **29%-ը** մասամբ է պատկերացնում իր ապագա մասնագիտությունը: Այսինքն, կամ դա խոսում է մեր ուսանողների անտարբերության մասին, կամ խնդիր ունենք

կրթական ծրագրերի իրականացման, կրթական վերջնարդյունքների սահմանման և դրանց հասնելուն միտված ուսուցման գործընթի հետ:



Դիագրամում ներկայացված արդյունքներից երևում է, որ իրենց ապագան որպես մասնագետ հստակ չեն պատկերացնում «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները. այդպես են նշել հարցմանը մասնակցած 10 ուսանողներից 7-ը, նման իրավիճակում են նաև «Հոգեբանություն» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսանողները:

Այստեղ ամբիոնները բավականին աշխատանք ունեն կատարելու, մասնավորապես, դեռևս առաջին կուրսից անհրաժեշտ խորհրդատվությամբ և ապագա մասնագիտության ընկալմանն ուղղորդված քննարկումներով աջակցելով ուսանողներին:

Յուրաքանչյուր դասախոսի պարտքն է.

- ✓ իր մասնագիտական փորձն ու կարողությունները ընկալելի և կողմնորոշված փոխանցել իր ուսանողներին,
- ✓ յուրաքանչյուր դասընթացի արդյունքները կապել մասնագիտության հետ,
- ✓ համապատասխան խնդիր-օրինակներով և իրավիճակներով ներկայացնել, մեկնաբանել և հստակեցնել ապագա մասնագիտության տեսլականը,
- ✓ օգնել մտածելու մասնագիտորեն, իրեն զգալ որպես տվյալ մասնագիտական որակները կրող անհատ,
- ✓ արդարացնել սպասելիքները և ակնկալիքները և այլն:

Որպես տրամաբանական շարունակություն նշենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների **65%-ը** փաստել է, որ իրեն <u>ծանոթացրել են իր մասնագիտության կրթական ծրագրին</u>, իսկ **27%-ը** մասամբ է այդ կարծիքին, ընդ որում յուրաքանչյուր կրթական ծրագրից հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե մեկ երրորդը գտնում է, որ իրենց մասամբ են ծանոթացրել կրթական ծրագրին: Ենթադրում ենք, որ այս թվերն ավելի շուտ խոսում են



ուսանողների անտարբերության մասին, հակված ենք մտածելու, որ **<u>ուսումնական խորհրդատուները և կրթական ծրագրերի ղեկավարներն</u>** այնուամենայնիվ աշխատել են ուսանողների հետ:

Ըստ հարցման արդյունքների ուսանողների **13%-ը** տեղեկացված չէ, իսկ **5%-ը** բավարարված չէ <u>կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքից</u>: Հարցմանը մասնակցած ուսանողների **55%-ը** բավարարված է կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքից, ինչը վատ արդյունք չէ, սակայն մասնաճյուղում կարևորվում է յուրաքանչյուր ուսանողի կարծիքը և գնահատականը: Նշենք, որ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Ֆինանսներ», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Դիզայն» և «Կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողների բավարարվածության տոկոսը 50-ից ցածր է:



1.3. Ինչքանո՞վ եք բավարարված կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքից

Հարցման մասնակիցների **19%-ը** տեղեկացված չէ և **12%-ը** բավարարված չէ <u>ուսումնական խորհրդատուի աշխատանքներից</u>, ընդհանուր առմամբ ցածր է նաև բավարարվածության աստիճանը՝ **49%:** Աստեղ ուսումնական խորհրդատուների աշխատանքից բավարարվածության տոկոսը բավականին ցածր է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Հոգեբանություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ուսանողների մոտ:



1.4. Ինչքանո՞վ եք բավարարված ուսումնական խորհրդատուի աշխատանքից

Այստեղ արդյունքների մեջ չենք ուզում բացառել նաև ուսանողների անտարբերությունը, պասիվ պահվածքը, անհետաքրքրվածությունը, ծուլությունը և այլն:

Այս արդյունքները վկայում են, որ երկար տարիներ շարունակ մասնաճյուղում կայուն ներդրված և ղեկավարության կողմից մշտապես վերահսկողության և ուշադրության կենտրոնում գտնվող այս երկու գործընթացներում խնդիր ունենք: **Կրթական ծրագրերի ղեկավարիներին և ուսումնական խորհրդատուներին առաջարկում ենք** վերանայել ուսանողների հետ համագործակցության մեթոդները և լինել առավել հետևողական:

Մասնաճյուղում իրականացվող տարբեր հարցումները նպատակ ունեն ներգրավելու ուսանողներին իրենց արդյունավետ և որակյալ ուսումնառությունն ապահովող գործընթացների իրականացմանը և բարելավմանը: Մասնավորապես, նրանց կարծիքները, հետաքրքիր և բովանդակային առաջարկները կարևորվում են և օգտագործվում են կրթական ծրագրերի

մշակման և վերանայման ժամանակ՝ դարձնելով դրանք ավելի կիրառական, արդիական և իրատեսական։

Մասնաճյուղից բավարարվածության հարցման շրջանակներում ուսանողների միջոցով մշտապես փորձում ենք.

- ✓ հավաքագրել տեղեկատվություն տարբեր դասընթացներում թեմատիկ հնարավոր կրկնությունների վերաբերյալ,
- ✓ ուսումնասիրել ուսանողների կարծիքները որպես ապագա մասնագետ և անհատ նրանց ձևավորման գործում կրթական ծրագրի շրջանակներում մատուցվող դասընթացների կարևորության մասին,
- ✓ հասկանալ, թե ո՞ր դասընթացներն ըստ ուսանողների կարելի է հանել, կամ ի՞նչ նոր դասընթաց կարելի է ավելացնել կրթական ծրագրում և այլն։

Նշենք, որ տարբեր կրթական ծրագրերի համար ուսանողների կողմից նշվել են, ըստ իրենց, թեմատիկ կրկնություն ունեցող մի շարք դասընթացներ։ Օրինակ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի հարցմանը մասնակցած 31 ուսանողներից 8-ը նշել են, որ թեմատիկ կրկնություններ կան «Մանկավարժական հոգեբանություն» և «Մանկան զարգացման հոգեբանություն» դասընթացներում, «Անգլերեն լեզու և գրականություն» ու «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի հարցմանը մասնակցած համապատասխանաբար 42+10 ուսանողներից 15+2=17 ուսանող նշել են, որ թեմատիկ կրկնություններ կան «Անգլերեն» և «Ֆրանսերեն» դասընթացներում, «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 13 ուսանողներից 5-ը նշել են «Ժամանակակից հայոց լեզու» և «Լեզվաբանության հիմունքներ» դասընթացների մասին և այլն։

Ուրախությամբ պետք է փաստենք, որ մեր ուսանողները «Ի՞նչ առարկաներ կհանեիք, կամ նոր ի՞նչ առարկաներ կավելացնեիք ձեր կրթական ծրագրի ուսումնական պլանում» բաց հարցի պատասխաններում ավելի շատ նշել են նոր դասընթացներ ավելացնելու, քան հանելու մասին։ Տարբեր կրթական ծրագրերի ուսանողներ առաջարկում են ավելացնել օտար լեզվի դասընթացներ, «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներն առաջարկում են իրենց ծրագրում ավելացնել. 1.«Հայոց լեզու» դասընթացը, 2.«Անգլերենի, ֆրանսերենի լսողական դասեր», 3. ավելացնել մասնագիտական դասընթացների ժամաքանակները և այլն։ Ուսանողներն առաջարկում են կրթական ծրագրում ներառել նաև ադրբեջաներեն լեզվի ուսուցման դասընթաց։ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսանողն առաջարկում է ավելացնել դասընթաց, որն անց կկացնի դպրոցից հրավիրված փորձառու դասվարը (միգուցե մի քանիսը), որպեսզի ավելի կիրառական ներկայացնի տարբեր իրավիճակներում տարրական դասարանում առկա դասավանդման դժվարությունները, ներկայացնի դրանց հաղթահարման իր մեթոդները և ուղիները։

Նշենք, որ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն ուսանողների նկատառումներն ամփոփելուց հետո արդյունքները մշտապես ներկայացնում է ամբիոններ, որոնք օգտագործվում են կրթական ծրագրերի վերանայման ժամանակ։ Այս հարցման արդյունքները նույնպես կտրամադրվեն բոլոր շահագրգիռ կողմերին;

Առաջարկում ենք բոլոր կրթական ծրագրերի ղեկավարներին, ամբիոնների վարիչներին և դասախոսներին, ուշադրությամբ դիտարկել ուսանողների կարծիքները և առաջարկները, և դրանք օգտագործել կրթական ծրագրերի և դասընթացների վերանայման ժամանակ:

Ուսանողների անտարբերության, պասիվության, միգուցե նաև չհետաքրքրվածության մասին են խոսում նաև ուսանողական կառույցներից նրանց տեղեկացվածության բարձր և նրանց համագործակցության ցածր, նրանցից բավարարվածության ցածր տոկոսները:

Ուսանողական կառույցներին վերաբերող հարցերին պատասխանած **193** ուսանողներից **28-ը** (15%-ը) տեղեկացված չէ ուսանողական խորհրդի (ՈՒԽ), իսկ **20-ը**՝ (10%-ը) տեղեկացված չէ ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեությունից: Ակնհայտ է, որ այստեղ իրենց մեղքի բաժինն ունեն նաև հենց ուսանողական կառույցները: Նրանք պետք է ընդունեն, որ իրենց գործունեությունն ուղղված է բոլոր ուսանողների համար ուսումնա-գիտական և մարզամշակութային միջավայրի ձևավորմանը, հետևաբար իրենք պետք է հասանելի լինեն բոլորի համար, ներգրավեն շատերին, և իրենց գործունեությամբ աջակցեն մասնաճյուղի և ֆակուլտետների ղեկավարությանը՝ ուսանողների խնդիրների լուծման և նրանց մոտիվացիայի բարձրացման գործում:

Նշենք, որ այնուամենայնիվ, տեղեկացված և ուսանողական կառույցներում ներգրավված կամ համագործակցող ուսանողներն, ընդհանուր առմամբ, բավարարված են նրանց գործունեությունից: Ուսանողական խորհրդի գործունեությունից բավարարված են հարցմանը մասնակցած ուսանողների **61%-ը,** իսկ ուսանողական գիտական ընկերության գործունեությունից՝ **69%-ը:**

Առաջարկում ենք ուսանողական կառույցների ղեկավարներին լինել ավելի թափանցիկ, հասանելի, կրեատիվ և նպատակային, ու գործել «բոլորի համար» սկզբունքով՝ ընդլայնելով շարքերը հատկապես առաջին կուրս ընդունված ուսանողներով:





2. Բավարարվածությունը ռեսուրսներից և ծառայություններից

Հարցման շրջանակներում հետազոտել ենք նաև մասնաճյուղի ռեսուրսներից և ծառայություններից՝ գրադարանից, ընթերցասրահից, մասնաճյուղի պաշտոնական կայքից և

ֆեյսբուքյան էջից, էլեկտրոնային գրադարանից, բուժկետի ծառայությունից ուսանողների բավարարվածությունը:

Ամենամյա այս հարցման, նաև այլ հարցումների շրջանակներում պարբերաբար ուսումնասիրում ենք ուսանողների բավարարվածությունը գրադարանում առկա մասնագիտական գրականության քանակից և որակից: Այն հանգամանքը, որ մասնաճյուղի և գրադարանի ղեկավարությունը մշտապես համալրում է գրադարանային ֆոնդը նոր մասնագիտական գրականությամբ՝ ձեռք բերելով դրանք ըստ ամբիոնների պահանջագրերի, այնուամենայնիվ, մեր ուսանողների բավարարվածության աստիճանը մասնագիտական գրականության քանակից և որակից այնքան էլ բարձր չէ: Նշենք, որ մասնագիտական անհրաժեշտ գրականության քանակի և որակի բացը լրացվում է էլեկտրոնային գրադարանի միջոցով:

<u>Գրադարանում առկա գրքերի քանակից</u> լիարժեք բավարարված են միայն **33%**-ը, իսկ ահա **52%-ը** բավարարված են մասամբ, այսինքն հարցմանը մասնակցած ուսանողների կեսից ավելին: Ավելի անհասկանալի է, որ ունենք նաև **15%** չբավարարված ուսանողներ: Հավանաբար այստեղ իր ազդեցությունն ունի նույն գրքից առկա օրինակների սահմանափակ քանակը, ինչը նշանակում է, որ ոչ բոլոր ուսանողներին են հասանելի, օրինակ, դասագիրք հանդիսացող



գրքերը, նաև յուրաքանչյուր ոլորտի նոր զարգացումներից կախված դասախոսների կողմից անհրաժեշտ գրականության ցանկերի փոփոխությունները, դրանցից շատերի ձեռք բերելու դժվարությունները և այլն: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ օրինակ, «Հոգեբանություն» կրթական ծրագրի հարցմանը մասնակցած 10 ուսանողներից 7-ը մասամբ է բավարարված գրքերի քանակից (նշենք, որ այս կրթական ծրագիրն իրականացվում է ընդամենը 2 ուսումնական տարի, հետևաբար գրականության համալրումը կատարվում է աստիճանաբար), զարմանալիորեն գրականության քանակից բավարարված չեն նաև «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի հարցմանը մասնակցած 13 ուսանողների 62%-ը:

Դիագրամում ներկայացված արդյունքներից երևում է, որ **<u>գրականության որակի</u>** առումով ունենք բավարարվածության ավելի լավ պատկեր՝ **59%**: Գրադարանում առկա մասնագիտական գրականության որակից հատկապես բավարարված են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 84%, «Պատմություն»՝ 83%, «Հայոց լեզու և գրականություն»՝ 77%, «Հոգեբանություն»՝ 70% կրթական ծրագրերի ուսանողները: Բավարարվածության ընդգծված ցածր արդյունք ունենք «Ֆինանսներ»՝ 38%, «Դիզայն»՝ 31%, «Դեկորատիվ կիրառական արվեստ»՝ 43% կրթական ծրագրերի համար:

Չմոռանանք, որ այս արդյունքների վրա իրենց ազդեցությունն ունեն նաև ընթացիկ ուստարում առաջին անգամ իրականացված հետազոտական աշխատանքները, որոնք մեծացրել են նոր, նեղ մասնագիտական գրականության պահանջարկը, բարձրացրել դրանց որակի նկատմամբ չափանիշները:

Այս արդյունքները վկայում են, որ գրադարանի ղեկավարությունը պետք է ակտիվացնի համագործակցությունը ամբիոնների հետ, հստակեցնի յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա համար դասախոսների պլանավորած մասնագիտական գրականության ցանկը, նախապես կազմակերպի դրանց ձեռքբերումը:

Մասնաճյուղի կողմից իրականացվող ծառայությունների և ռեսուրսների բարելավման նպատակով **<u>ուսանողներն առաջարկել են</u>** համալրել գրադարանը նոր գրականությամբ և վերանայել ընթեցասրահի սպասարկումը:

Նշենք, որ հարցմանը մասնակցած ուսանողների **71%-ը** (202-ից 143-ը) բավարարված է ընթերցասրահի սպասարկումից, հատկապես «Հոգեբանություն»՝ 90%, «Հայոց լեզու և գրականություն»՝ 85%, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 83% կրթական ծրագրերի ուսանողները:

Հարցմանը մասնակցած ուսանողների **78%-ը** (203-ից 158-ը) բավարարված է **<u>բուժկետի</u>** ծառայություններից, ուղղակի նրանք խնդիր են տեսնում բուժկետի տեղակայման հետ կապված՝ դա աշխատակցի հեռու գտնվելն է մասնաճյուղի 2-րդ մասնաշենքից:





Ուսումնասիրել ենք նաև ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղում տեղեկատվության ստացման հնարավորություններից, մատչելիությունից և բովանդակությունից: Մասնաճյուղն իր գործունեության մասին ամբողջ տեղեկատվությունը հանրությանը, մասնավորապես ուսանողներին տրամադրում է իր <u>պաշտոնական էլ.կայքի և ֆեյսբուքյան էջի, էլեկտրոնային գրադարանի էջի միջոցով</u>: Հետևաբար, մեզ հետաքրքրել է տեղեկատվության ստացման այդ աղբյուրների վերաբերյալ ուսանողների կարծիքները:

Նախ, մենք հարցման միջոցով պարզաբանել ենք, թե մեր ուսանողները որքա՞ն հաճախականությամբ են օգտվում տեղեկատվության ստացման այդ հարթակներից, ինչը բացահայտում է նաև մասնաճյուղի գործընթացներից նրանց տեղեկացվածության աստիճանը:

3. Բավարարվածությունը մասնաճյուղի կայքից և ֆեյսբուքյան էջից

Պարզվում է, որ թեկուզ քիչ թվով, սակայն կան ուսանողներ (հարցմանը մասնակցածների **5%-ը**), որոնք ընդհանրապես չեն օգտվում մասնաճյուղի պաշտոնական կայքից, կամ օգտվում են հազվադեպ՝ **40%** (82 ուսանող), ինչն իհարկե, վատ է և մեկ անգամ ևս խոսում է նրանց անտարբերության մասին: Ուսանողների **41%-ը** նշել է, որ հաճախ է օգտվում կայքից, միայն **15%-ի** համար է մասնաճյուղի պաշտոնական կայք-էջը տեղեկատվության ստացման մշտական աղբյուր:



Գրեթե համարժեք արդյունքներ են նաև մասնաճյուղի ֆեյսբուքյան էջի հետ կապված: Թվում է, թե ֆեյբուքյան էջում հաղորդակցվելն ուսանողների համար ավելի ազատ և հասանելի տարբերակ պետք է լինի, սակայն պարզվում է, որ հարցման մասնակիցների **25%-ը** չի օգտվում էջից, **33%-ը** օգտվում է հազվադեպ, իսկ ահա մշտապես օգտվում է միայն նրանց **11%-ը**, ինչն իհարկե շատ վատ ցուցանիշ է:



Սրանից, որպես հետևանք, ստանում ենք մասնաճյուղի <u>պաշտոնական կայքից և ֆեյսբուքյան էջից օգտվողների բավարարվածության</u> բարձր արդյունքները: Այդ արդյունքները



ևս մեկ անգամ հաստատում են, որ մասնաճյուղում կարևորվում է տեղեկատվության հանրայնացումը, լիարժեքությունը և թափանցիկ գործունեությունը:

Դիագրամում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ մասնաճյուղի պաշտոնական կայքից օգտվող ուսանողների **70%-ը** (192-ից 134-ը) ամբողջությամբ

բավարարված է տեղեկատվության ստացման հարմարավետությունից, **71%-ը** (191-ից 135-ը)՝ տեղեկատվության լիարժեքությունից, իսկ **75%-ը** (187-ից 140-ը)՝ նորությունների լուսաբանումից: Նշենք, որ տեղեկատվության լիարժեքությունից և նորությունների լուսաբանումից բավարարվածության արդյունքները բարձր են նաև ֆեյսբուքյան էջի համար:



Ներկայացված արդյունքները վկայում են, որ մասնաճյուղի ուսանողները հետաքրքրված են մասնաճյուղում իրականացվող գործընթացներով: Վստահ ենք, որ մեր ուսանողներն ակտիվ օգտվում են ուսանողներին վերաբերող բոլոր բաժիններից՝ կարգերից, կանոնակարգերից, կրթական ծրագրերից, քննաշրջաններին վերաբերող գրաֆիկներից ու արդյունքների լուսաբանումից, դասացուցակներից և այլն, վստահ ենք, որ նրանք դիտում են նաև կրթության որակին վերաբերող բաժնում տեղադրված նմանատիպ հարցումների արդյունքները և վերլուծությունները, իսկ ամենաշատն, ակնհայտ է, տեղադրված թարմ հայտարարությունները, նորությունները, իրադարձությունները և այլն:

Ուսանողները մշտապես առաջարկում են փոխել մասնաճյուղի կայք-էջի դիզայնը, իսկ տեղեկատվության և նրա ստացման հետ կապված խնդիր չեն տեսնում: Իսկ ահա ֆեյսբուքյան էջում առաջարկում են ավելի հաճախ ու բազմակողմանի անդրադառնալ ուսանողական կյանքին և ուսանողների կատարած աշխատանքներին:

4. Բավարարվածությունը մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանից

Անդրադառնալով մասնաճյուղի **էլեկտրոնային գրադարանի էջին**, նշենք, որ այն բավականին հաջողությամբ լրացրեց մասնաճյուղի գրադարանային ֆոնդը, ավելացրեց նոր գրականություն ունենալու հնարավորությունը, իր դիզայնով և մատչելիությամբ մասնաճյուղի ուսանողների համար դարձավ տեղեկատվական ամենապահանջված հարթակը:



Տարբեր ակտիվությամբ էլ.գրադարանից օգտվում են հարցմանը մասնակցած ուսանողների **85%-ը**, ընդ որում նրանց **56%-ը** օգտվում է հաճախ և մշտապես: Այստեղ ընդգծված խնդիր ունենք «Դիզայն»,

«Դեկորատիվ կիրառական արվեստ», «Հոգեբանություն» կրթական ծրագրերի ուսանողների դեպքում: Ըստ արդյունքների, այդ ծրագրերի ուսանողների հիմնական մասը չի օգտվում էլեկտրոնային գրադարանից: Այստեղ պետք է պարզել, թե ինչու՞մն է խնդիրը. արդյո՞ք անհրաժեշտ գրականություն տեղադրված չէ, քիչ է, կամ ուղղակի գրադարանի գրականությունը բավարարում է և էլեկտրոնայինի կարիք չկա և այլն: Այս խնդիրը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի և խորհուրդ ենք տալիս գրադարանի աշխատակազմին և համապատասխան կրթական ծրագրերի ղեկավարներին հանդիպել և այդ հարցը քննարկել ուսանողների հետ, պարզել պասիվության պատճառը, առաջարկել դրանց լուծման ճանապարհներ:

Ընդհանուր առմամբ ուսանողները բավարարված են մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանից, մասնավորապես գրականության ստացման հարմարավետությունից ամբողջությամբ և մասամբ բավարարված են հարցմանը մասնակցած ուսանողների **99%-ը,** գրականության քանակից՝ **91%-ը,** գրականության որակից՝ **98%-ը:** Ըստ արդյունքների, խնդիր կա միայն գրականության քանակի հետ կապված. քանակից բավարարված են ուսանողների 55%-ը: Արդյունքները գոհացնող են:



Էլեկտրոնային գրադարանի ակտիվացմանն համար ուսանողներն առաջարկում են կայքը համալրել ժամանակակից գրականությամբ և այն գրքերով, որոնցից մասնաճյուղի գրադարում առկա է ընդհամենը 1-2 օրինակ: Նրանք նշում են, որ գրքերի լուսապատճենահանված (սկանավորված) տարբերակները որակի տեսանկյունից խնդիր ունեն և անհարմար են օգտագործման համար:

<u>Ամփոփում</u>

Ամփոփելով հարցման արդյունքները կարելի է փաստել, որ ուսանողները մեծամասամբ իրազեկված են և նաև բավարարված իրենց ուսումնառությանն աջակցող և նպաստող բոլոր ռեսուրսներից և ծառայություններից:

Ռեսուրսների և ծառայությունների բարելավման համար ուսանողներն առաջարկում են.

1. Ակտիվացնել ուսանողների և կրթական ծրագրերի ղեկավարների համագործակցությունը, վերջիններիս և դասախոսական կազմի աջակցությամբ ուսանողներին հասկանալի դարձնել կրթական ծրագրում ներառված յուրաքանչյուր

դասընթացի դերը նրաց մասնագիտական աճի և որպես մասնագետ ձևավորման գործում:

2. Շարունակել գրադարանի համալրումը՝ նախապատվությունը տալով վերևում ներկայացված խնդրահարույց կրթական ծրագրերով պահանջվող գրականությանը:
3. Ֆակուլտետներում ակտիվացնել և ընդլայնել խորհրդատվական ծառայությունները, հետևողական լինել դրանցում ուսանողների ներգրավվածությանը և դրանց արդյունավետությանը:

Նշենք, որ հարցման բոլոր արդյունքները մանրամասն, գրաֆիկների և աղյուսակների տեսքով, ինչպես նաև ուսանողների առաջարկները՝ վերլուծված և ընդհանրացված, ներկայացված են հաշվետվությանը կից ֆայլերում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին